



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

1 փետրվարի 2024 թվականի թիվ 17-Ա

ք. Երևան

#### «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերության՝ Գյումրի քաղաքում հատկացված հաճախականությունը փոխելու վերաբերյալ 2024 թվականի հունվարի 11-ի, հունվարի 26-ի դիմումները և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2024 թվականի հունվարի 25-ի N 01/11.1/599-2024 գրությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 52-Ա որոշմամբ «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերությանը Գյումրի քաղաքում հատկացված 103.6 ՄՀց հաճախականությունը փոխարինել 103.7 ՄՀց հաճախականությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐ ՌԱԴԻՈ ՄԻՋՄԱՅՐՑԱՄԱՔԱՅԻՆ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՔՅԱՆ

2024թ. փետրվարի 1  
ք. Երևան